



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԷՆՍԻՆՈՅԻ
Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 11 Մայիսը, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Հոգեգալստեան տօնն է, միաժամանակ տօնն է մայրերուն: Այս առիթով Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագին, եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ հաւատացեալներուն:

Անցեալ շաբաթավերջին, ծայրագոյն արեւելքի երկիրներէն՝ Պուրմայի (Միանմար) մայրաքաղաքին շրջանը ենթարկուեցաւ բնական աղետի մը. ահաւոր մրրիկ մը մահ ու անքն սփռեց շրջանին մէջ, խլելով բազմահազար զոհեր ու անտուն ձգելով շուրջ մէկ միլիոն բնակիչներ:

Առաջնորդ Սրբազան հօր յանձնարարութեամբ, այս Կիրակի, 11 Մայիսին, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ »Տեր Ողորմիա«ի պահուն յատուկ աղօթք պիտի կատարուի անմեղ զոհերուն ու աղետեալներուն համար:

Այսու կոչ կ'ընենք մեր բարեպաշտ ժողովուրդին, որ կարելի միջոցներով աջակցութեան ձեռք երկարեն աղետեալներուն:

Նիւթական օժանդակութիւնները կարելի է փոխանցել Ամերիկեան Կարմիր Խաչին եւ World Vision բարեսիրական կազմակերպութեան միջոցով:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
HOLY MARTYRS CHURCH**

Sunday, May 11th, is the Feast of Pentecost as well as Mother's Day. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church and deliver the sermon.

The Prelate will also preside over special prayer services for the victims of the cyclone in Myanmar. By the ordinance of the Prelate, prayers will be offered in all Prelacy Churches for the victims.

We urge our faithful to assist in the relief efforts through the Red Cross or World Vision.

**ՅՈՒՅԱՅԱՆԴԵՍ ՌԱԶՄԻԿ ՀԱԾԻԿԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ
ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ**

Ուրբաթ, Մայիս 16-ին եւ Շաբաթ, Մայիս 17-ին, նկարչական ցուցահանդես-վաճառք տեղի պիտի ունենայ Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ: Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ կազմակերպուած է Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման Յանձնախումբին կողմէ:

Պիտի ցուցադրուին Ռազմիկ Հաճիկեանի գործերը:

Պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Մայիս 16-ի երեկոյեան ժամը 7-ին եւ պիտի շարունակուի մինչեւ իրկուայ ժամը 10-ը:

Երկօրեայ ցուցահանդեսը պիտի շարունակուի Շաբաթ, Մայիս 17-ին, կ.ա. ժամը 11-էն մինչեւ կ.ե. ժամը 5-ը:

**ART EXHIBIT AT THE PRELACY FEATURING THE WORKS OF
RAZMIK HADJIKIAN**

The Prelacy Outreach Committee, under the auspices of the Prelate, has organized an art exhibit/sale to take place at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall. The exhibit will feature the works of artist Razmik Hadjikian.

Opening night is on Friday, May 16th, from 7:00 p.m. to 10:00 p.m. The exhibit will also be open on Saturday, May 17th, from 11:00 a.m. to 5:00 p.m.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԱՎՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ
«ՍԱՍՆԱՅ ԵՐԿԻՐ» ՀԱՄԵՐԳԻՆ**

Կիրակի, 11 Մայիսի երեկոյեան ժամը 7:30-ին, բացառիկ համերգ մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Ալէքս հանդիսասարահին մէջ, «Սասնայ Երգիր» խորագրով: Յայտագիրն իրենց մասնակցութիւնը բերելու համար, Հայաստանէն հրաւիրուած են երգիչներ եւ երգչուհիներ: Ելոյթ պիտի ունենան նաեւ հայկական պարախումբեր:

Առաջնորդ Սրբազանը, քաջալերելով ձեռնարկին նպատակը, պիտի ընդառաջէ իրեն ուղղուած հրաւերին եւ ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին ու պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:

PRELATE TO ATTEND “SASNA YERGIR” PERFORMANCE

On the evening of Sunday, May 11th, a special show, titled “Sasna Yergir” will be presented at Alex Theatre in Glendale. The show will feature dance, song, and poetry by a variety of artists.

The Prelate will attend and convey his blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ Կ'ԸՆԴԱՌԱՋԷ UCLA-Ի ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻ ՀՐԱՒԵՐԻՆ

Շաբաթ, 10 Մայիս երեկոյեան, UCLA-ի Նարեկացիի անուան հայագիտական ամպիոնի բարեկամներու կազմակերպութեամբ, 10-րդ տարեկան ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ UCLA համալսարանի Կեդրոնին մէջ, Լոս Անճելըս:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպ. Տ. Միւռն Տ. Կրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

PRELATE TO BE REPRESENTED AT UCLA BANQUET

The 10th anniversary banquet of the Friends of the UCLA Armenian Language and Culture Studies is scheduled to take place on the evening of Saturday, May 10th.

Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate at the banquet.

ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՐԱԿԱՆԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 36րդ նստաշրջանի նախօրեակին, Չորեքշաբթի, 7 Մայիսի առաւօտեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեւորականաց համագումար, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, եւ մասնակցութեամբ Թեմիս միաբան հայրերուն եւ քահանայից դասուն:

Համագումարին հիւրաբար ներկայ էր Ս. Աթոռոյս երեց միաբաններէն եւ Թեմիս նախկին առաջնորդներէն՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, ինչպէս նաեւ հանգստեան կոչուած քահանայ հայրեր:



Առաւօտեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Գիշերային Ժամերգութիւն եւ երգուեցան Հոգեգալստեան Տօնի շարականներ:

Արարողութեան աւարտին, հոգեւոր խորհրդածութեան պահը առաջնորդեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ան շեշտեց աղօթքին անհրաժեշտութիւնը ընդհանրապէս Զրիստոնէայ

մարդուն, եւ յատկապէս եկեղեցականի կեանքին ու հոգեւոր աճման մէջ:

Աւելի ուշ, համագումարը սկսաւ իր աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազան Հայրը նախ ողջունեց բոլոր հոգեւոր հայրերը, գնահատեց անոնց նուիրումն ու մատուցած ծառայութիւնը հոգեւոր մարզէն ներս, եւ մաղթեց, որ ժողովական այս օրը ընթանայ հեգասահ եւ պտղաբեր:

Ապա, Սրբազանը Թեմական աշխատանքներու համապարփակ ներկայացումը կատարեց, սկսելով հոգեւոր-արարողական կեանքէն, ժողովուրդին հետ քահանայից յարաբերութենէն, անցնելով երիտասարդաց խմբակներու եւ կիրակնօրեայ վարժարաններու աշխոյժ գործունեութեան, անդրադառնալով նաեւ ծուխերէն ու եկեղեցիներու համալիրներէն ներս տարուող շինարարական աշխատանքներուն, երկրորդական վարժարանի մը շինութեան ծրագրին, Թեմա երիտասարդ ու պատրաստուած նոր քահանաներով օժտելու անհրաժեշտութեան, ժողովուրդի հոգեւոր պահանջներուն, եւ պատկերասփիւռի կայանէն հոգեւոր ծրագրին նոր շեշտ եւ նոր յայտագիրներ ծրագրաւորումին մասին:

Սրբազան Հայրը նաեւ յիշեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Ս. Աթոռի հոգեւոր իսկանքին եւ հովուութեան յանձնուած Ամերիկայի Թեմա այս տարի կը տօնէ իր հաստատման 50ամեակը, իսկ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան մեր Թեմը, որպէս առանձին Թեմական Առաջնորդութիւն՝ 35ամեակը:

Հոգեւորականաց Համագումարի Դիւանի անդամ ընտրուեցան Գերշ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, ատենապետ, եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեան՝ ատենադպիր:

Ներկայացուեցաւ Կրօնական Ժողովի տեղեկագիրը, որ ենթարկուեցաւ անհրաժեշտ բարեփոխութեանց:

Հայր Միւռն զեկուցեց «Քրիստոնէական Դաստիարակութեան Տարուան» ծրագիրին մասին, ապա մշակուեցաւ լսարաններու եւ դասախօսութեանց ծրագիր:

Կեսօրին, սիրալիր մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ:

Համագումարի երկրորդ նիստը սկսաւ յետ միջօրէին: Հայր Պարթեւ ներկայացուց եկեղեցականաց բարեփոխեալ ուղեցոյցը:

Որոշուեցաւ նաեւ, որ մշակուին տարբեր մակարդակի աշխատանքներու ուղեցոյցներ եւս:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացուց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի բարեփոխեալ կանոնագրութիւնը:

Կատարուեցաւ Ազգային Երեսփոխանական Ժողովի եկեղեցական երեսփոխաններու ընտրութիւնը: Ապա, բանաձեւուեցան համագումարին կողմէ Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայացուելիք առաջարկները:

Համագումարի վերջին բաժինով, նկատի առնուեցան յառաջիկայ ամիսներու աշխատանքներու գլխաւոր հանգրուանները:

Եզրափակիչ խօսքով, Առաջնորդ Սրբազանը գնահատեց համագումարին մասնակցող հոգեւոր հայրերը:

Երեկոյեան վերջ գտաւ քահանայից համագումարը, «Աշակերտք Քրիստոսի», շարականի միատեղ երգեցողութեամբ եւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով:

WESTERN PRELACY CLERGY CONFERENCE

On the eve of the 36th Prelacy Representative Assembly, the annual clergy conference was held on Wednesday, May 7th, at the “Armenag Der Bedrossian” Hall of St. Mary’s Church in Glendale. The conference was presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with the participation of the clergy order. Former Prelate H.E. Archbishop Yeprem Tabakian and retired clergy members also participated.

The day began with church services followed by a spiritual meditation by the Prelate in which he stressed the importance of prayer and trust in God.



The conference convened with remarks by the Prelate who commended the devotion and service of the clergy members, and wished for the day’s proceedings to progress smoothly. He then presented a comprehensive report of the Prelacy’s endeavors, including religious ceremonies, youth and Sunday School activities, construction projects of our parishes and churches, the establishment of

a new high school, the need for new clergy members, the spiritual needs of our parishioners, and adding new elements to the Prelacy’s weekly television programming. The Prelate also spoke of the organizing of joint events by the three Prelacies of North America and Canada to celebrate the 50th anniversary of the establishment of a Prelacy in North America, as well as the 35th anniversary of the Western Prelacy.

Archbishop Tabakian then thanked the Prelate for the invitation to attend the conference and wished the participants success, stressing the importance of collaboration. Following the election of Very Rev. Fr. Muron Aznikian as Chair of the meeting and Very Rev. Fr. Barthev Gulumian as secretary, the annual report of the Religious Council was presented and subsequent changes made.

Very Rev. Fr. Aznikian presented a draft of the events planned for the “Year of Christian Education” which includes a lecture series to take place at each church in the coming months.

The second session convened after lunch with Very Rev. Fr. Barthev Gulumian presenting the clergy guidebook for review, which was later adopted by the members and by the approval of the Prelate will be published and implemented. The Prelacy by-laws was then presented by the Prelate, followed by the election of religious delegates for the Representative Assembly and the outlining of proposals to present to the Assembly. The conference concluded with a discussion of future endeavors including the General Assembly, the blessing of Holy Muron, and youth group activities.

The conference concluded in the evening with the Prelate's closing remarks and benediction.

ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ԱՆԴԱՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՅԱՆ ՈՐԴՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐՈԹՔԻ ՕՐՈՒԱՆ

Ղրպտի Ուղղափառ եկեղեցւոյ Սանթա Մոնիքայի Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս եկեղեցին Շաբաթ, 3 Մայիսին ժամադրաւայրը եղաւ Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդական Միութիւններու անդամներուն, որոնք հիւրընկալ եկեղեցւոյ մէջ ունեցան աղօթքի ու հոգեւոր աշխատանքի օր մը: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի յանձնարարութեամբ, մեր Թեմի եկեղեցիներու երիտասարդական Միութեանց անդամներ եւս մասնակցութիւն բերին այս հանդիպումին, առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչներ՝ Գերպ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի եւ Զոզ. Ս. Պարթեւ Վրդ. Կիլիւմեանի: Կը մասնակցէին, Ղրպտի ու Զայց. Առաքելական եկեղեցիներու կողքին՝ Ասորի, Անտիոքի, Եթովպիոյ եւ Ռուսիոյ Ուղղափառ եկեղեցիներուն ներկայացուցիչները:



Առաւօտեան ժամը 8:30ին տեղի ունեցաւ Ս. Պատարագ, որուն աւարտին, ներկաները ստացան Ս. Զաղորդութիւն: Ապա, եկեղեցւոյ կողքի սրահին մէջ անոնք ունեցան միացեալ ճաշ ու ծանօթացան իրարու:

Պաշտօնական յայտագիրին մաս կը կազմէր շարականներու եւ հոգեւոր երգերու երգեցողութիւն. իւրաքանչիւր եկեղեցւոյ խմբակ ներկայացուց շարականներ: Զիւրընկալ եկեղեցւոյ

հոգեւոր հովիւը՝ Զայր Փօլ Մեկալի ողջունեց ներկայ երիտասարդները եւ մասնակից եկեղեցիներուն շնորհակալութիւն յայտնեց հոգիները հարստացնող յայտագիրին իրենց մասնակցութեան համար: Այնուհետեւ, իւրաքանչիւր եկեղեցւոյ մասին տրուեցան հակիրճ տեղեկութիւններ:

Փակման իր խօսքին մէջ, Զայր Փօլ Մեկալի գոհունակութիւն արտայայտեց յայտագիրին յաջողութեան համար եւ նշեց, որ թէեւ մասնակիցները կ'արտայայտուէին ութ տարբեր լեզուներով, սակայն անոնք աղօթեցին միասիրտ, փառաբանելով միեւնոյն Աստուածը, հետապնդելով նոյն նպատակը, այսինքն՝ փառաւորել Յիսուս Զրիստոսը: Ան նաեւ դրուատեց աղօթքի օրուան կազմակերպիչները եւ օրհնութեան խօսքով բարի երթ մաղթեց բոլորին:

PRELACY YOUTH PARTICIPATE IN ORTHODOX DAY OF PRAISE

On the morning of Saturday, May 3rd, Prelacy youth, under the direction of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, participated in an Orthodox Day of Praise held under the auspices of the Coptic Orthodox Diocese of Southern California and Hawaii. The event was organized and hosted by St. Peter and St. Paul Coptic Orthodox Church in Santa Monica. Among the participants were the Coptic, Syriac, Antiochian, Ethiopian, and Russian Orthodox Churches. The Prelacy youth delegation was headed by Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

The day began at 8:30 a.m. with the celebration of Divine Liturgy in the Coptic Orthodox rite. At the conclusion of the Liturgy all participants received Holy Communion, after which they headed to the adjoining hall for brunch and a meet and greet with members of the sister churches.

The official program consisted of the singing of hymns by the choirs of the ten participating churches. The program began with the Lord's Prayer and welcoming remarks by Pastor of the host church Fr. Paul Megally, who acknowledged and thanked the members of all the churches for sharing in the special day. Subsequently, a brief background was given on each church as the choirs were invited up to offer their songs.



Closing remarks were offered by Fr. Paul who once again thanked all the choirs for attending and for the preparation they undertook to make the event a success. He exclaimed that there were eight languages represented but one heart, one Lord, and one purpose, which was praise for our Lord Jesus Christ. He then thanked the organizers and coordinators for their diligent work in preparation for the event. The program concluded with the Lord's Prayer and the benediction by Fr. Paul.